ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «14» հոկտեմբերի, 2021 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 25-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ, ԱՌԱՋԱՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի N 20-Լ հրամանով հաստատված Գիտության կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 7)-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հաստատել՝

1) Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի ձևը՝ համաձայն Հավելված N 1-ի.

2) Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի ձևը՝ համաձայն Հավելված N 2-ի.

3) Ծառայությունների մատուցման պայմանագրի ձևը՝ համաձայն Հավելված N 3-ի:

2. Գիտության կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Շուշանիկ Աղաբեկյանին՝ սույն հրամանը և հավելվածները տեղադրել Գիտության կոմիտեի պաշտոնական կայքում:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Հավելված N 1
ԳԿ նախագահի
2021 թ. հոկտեմբերի 10-ի
N 25-Ա/Ք հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «____» հոկտեմբեր 2021 թ.

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, _____ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս

(կազմակերպության անվանում)

_____ի և _____ը (այսուհետ՝

(տնօրենի/ռեկտորի անուն, ազգանուն) *(թեմայի ղեկավարի անուն, ազգանուն)*

Թեմայի ղեկավար), (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի N 1693-Ա/2 հրամանը, _____

(ծածկագիր)

«_____» գիտական թեմայի (այսուհետ՝ Թեմա) իրականացման

(վերնագիր)

նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Թեմայի իրականացման նպատակով հատկացնել _____ ՀՀ դրամ գումար, իսկ Թեմայի ղեկավարը պարտավորվում

(թվերով և բառերով)

է Թեման իրականացնել Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Հատկացվելիք գումարի չափը հաստատվում է Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությամբ (Հավելված 1), նախատեսված՝ Թեմայի ղեկավարի կողմից իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Հետազոտություն) կատարման փուլերի ժամկետները և ֆինանսավորման ծավալները որոշվում են առաջադրանքով, օրացուցային պլանով և նախահաշվով (Հավելվածներ 2, 3 և 4):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից և Թեմայի ղեկավարից պահանջել կատարելու Պայմանագրի **2.5** և **2.6** կետերով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 Թեմայի ղեկավարից պահանջել աշխատանքը կատարել Պայմանագրի **7**-րդ կետում նշված ժամկետում,

2.1.3 չընդունել իրականացված Հետազոտությունները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 կատարել Թեմայի ղեկավարի փոփոխություն՝ վերջինիս կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ Կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի և Թեմայի կատարողների համաձայնությամբ, Կազմակերպության ղեկավարի միջնորդությամբ,

2.1.5 համաձայնել Թեմայի կատարողների կազմում կատարել ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի և տարիքային խմբի համարժեք փոփոխություն՝ Թեմայի ղեկավարի միջնորդությամբ,

2.1.6 համաձայնել կատարել Թեմայի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարի վերաբաշխում՝ Թեմայի իրականացման 12-ամսյա ժամանակահատվածում մեկ անգամ՝ Թեմայի ղեկավարի առաջարկությամբ,

2.1.7 դադարեցնել Թեմայի ֆինանսավորումը՝

2.1.7.1 Հայաստանի Հանրապետությունից Թեմայի ղեկավարի երկու ամսից ավելի անընդհատ բացակայության դեպքում,

2.1.7.2 առանց կոմիտեի համաձայնության Թեմայի կատարողների կազմում փոփոխություն կատարելու դեպքում,

2.1.7.3 առանց Կոմիտեի համաձայնության Թեմայի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում վերաբաշխում կատարելու դեպքում,

2.1.7.4 ընթացիկ հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում,

2.1.7.5 մասնագիտական փորձագիտական Խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից ընթացիկ հաշվետվությանը տրված բացասական եզրակացության դեպքում:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Պայմանագրի Հավելված 4-ով նախատեսված «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսված միջոցները տնօրինել Թեմայի կատարման ընթացքում Կազմակերպության կողմից մատուցած ծառայությունների ծախսերը հոգալու նպատակով,

2.2.2 Կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի և Թեմայի կատարողների համաձայնությամբ Կոմիտե ներկայացնել միջնորդություն՝ Թեմայի ղեկավարի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում փոփոխություն կատարելու մասին:

2.3 Թեմայի ղեկավարն իրավունք ունի՝

2.3.1 իրականացված Հետազոտության արդյունքը Կոմիտեի կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելիք գումարը,

2.3.2 Կոմիտեի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները,

2.3.3 Թեմայի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.3.4 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպությունների հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.4 Կոմիտեն պարտավոր է՝

2.4.1 ընդունել կատարված աշխատանքի արդյունքը համաձայն Պայմանագրի Հավելված 3-ի և վճարել դրա համար,

2.4.2 Թեմայի իրականացման մասին ներկայացված ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների վերաբերյալ ընդունել համապատասխան որոշում:

2.5 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.5.1 ապահովել Թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ,

2.5.2 Թեմայի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.5.3 Կոմիտեին տեղեկացնել առանց նախազգուշացնելու Հայաստանի Հանրապետությունից երկու ամսից ավելի ժամկետով Թեմայի ղեկավարի անընդհատ բացակայության, պարտականությունների կատարման անհնարինության հետ կապված այլ հանգամանքների մասին,

2.5.4 Կոմիտե ներկայացնել Թեմայի ղեկավարի և Կազմակերպության միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենը:

2.6 Թեմայի ղեկավարը պարտավոր է՝

2.6.1 Թեման կատարել անձամբ՝ կատարողների ընդգրկմամբ,

2.6.2 Թեման կատարել Պայմանագրի Հավելված 2-ին համապատասխան,

2.6.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով,

2.6.4 Թեմայի իրականացման աշխատանքների ավարտման օրվա դրությամբ չօգտագործված ֆինանսական միջոցները մեկշաբաթյա ժամկետում վերադարձնել Կոմիտեի համապատասխան հաշվին՝ կցելով ֆինանսական միջոցների չօգտագործման վերաբերյալ բացատրագիր,

2.6.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.6.6 Կոմիտեին տեղեկացնել երկու ամսից ավելի բացակայելու մասին՝ բացակայելուց առնվազն մեկ շաբաթ առաջ,

2.6.7 աշխատանքի սպասվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել Կոմիտե,

2.6.8 ապահովել **Հայաստանի Հանրապետության** կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 1821-Ա/2 հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված Հավելված N 2-ի 3.1 և 3.3 կետով նախատեսված պահանջները,

2.6.9 Կոմիտե ներկայացնել Թեմայի իրականացման յուրաքանչյուր 12-ամսյա փուլի մասին ընթացիկ հաշվետվություն, իսկ Թեմայի ավարտից հետո՝ ամփոփիչ հաշվետվություն: Ընթացիկ հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր փուլի իրականացման ժամկետի սկզբից հաշված 12-րդ ամսվան հաջորդող ամսվա առաջին 10-օրյակում, իսկ ամփոփիչ հաշվետվությունը՝ Թեմայի իրականացման ավարտից հետո 20 օրվա ընթացքում,

2.6.10 Թեմայի կատարողի փոփոխության անհրաժեշտություն առաջանալու դեպքում մեկշաբաթյա ժամկետում, համապատասխան հիմնավորմամբ դիմել Կոմիտե՝ ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի և տարիքային խմբի համարժեք փոփոխություն կատարելու կամ կատարողների կազմը մեկով կրճատելու (եթե մինչև 35 տարեկան կատարողը չէ) միջնորդությամբ: Թեմայի կատարողների կազմը կրճատելու դեպքում Կոմիտեի հետ կնքվում է Պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր,

2.6.11 Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքներին վերաբերող գիտական հրապարակման մեջ՝ ներառյալ զեկույցների թեզիսները, հիշատակել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին՝ Հրամանով հաստատված Հավելված N 2-ի 1.5 կետով նախատեսված պահանջներին համապատասխան:

3. Թեմայի ֆինանսավորման չափը

Թեմայի ֆինանսավորման չափը կազմում է _____ ՀՀ

(թվերով և բառերով)

դրամ:

4. Մշտադիտարկում

Կոմիտեն կարող է Թեմայի **շրջանակներում իրականացնել մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 20-ի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման» կարգի:**

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.2 Հաշվի առնելով աշխատանքների առանձնահատկությունները և ելնելով Կոմիտեի ֆինանսավորման հնարավորություններից՝ կարող է սահմանվել Պայմանագրի **5.1** ենթակետում նշված գրաֆիկից տարբերվող այլ տոկոսային բաշխում:

6. Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Թեմայով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Թեմայի ղեկավարը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Հետազոտության չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Հետազոտության համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Թեմայի ղեկավարին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Թեմայի ղեկավարին վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է _____ ամիս ժամկետով:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմերին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երեք օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Կողմերին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

9.2.1 Թեմայի ղեկավարի կողմից Կոմիտե ներկայացված Թեմայի հայտը,

9.2.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (Հավելված 1),

9.2.3 Առաջադրանքը (Հավելված 2),

9.2.4 Օրացուցային պլանը (Հավելված 3),

9.2.5 Նախահաշիվը (Հավելված 4):

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե	**Կազմակերպություն**	**Թեմայի ղեկավար**
ՀՀ գիտության կոմիտե ք. Երևան, Օրբելի եղբայրների 22 **Հ/հ** 900011033066 ՀՎՀՀ 02704199 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	_____ *(կազմակերպության անվանումը)* _____ *(կազմակերպության հասցեն)* _____ *(կազմակերպության բանկային վավերապայմանները)*	
Գլխավոր քարտուղար ` _____ *(ստորագրություն)* **ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ** **Կ. Տ.**	Կազմակերպության ղեկավար՝ _____ *(ստորագրություն)* _____ *(անուն, ազգանուն)* **Կ. Տ.**	Թեմայի ղեկավար՝ _____ *(ստորագրություն)* _____ *(անուն, ազգանուն)*

Հավելված 1
2021 թ. հոկտեմբերի ...-ի
N ..... պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնության

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանը, Կազմակերպության ղեկավար _____ը և _____ **«_____»**

(անուն, ազգանուն) *(ծածկագիր)* *(վերնագիր)*

Թեմայի ղեկավար _____ը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք

(անուն, ազգանուն)

բերել **2021 թվականի հոկտեմբերի «_____» N _____ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ _____ ՀՀ դրամ գումարի չափով:**

(թվերով և բառերով)

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե	**Կազմակերպություն**	**Թեմայի ղեկավար**
Գլխավոր քարտուղար՝	Կազմակերպության ղեկավար՝	Թեմայի ղեկավար՝
_____	_____	_____
(ստորագրություն)	*(ստորագրություն)*	*(ստորագրություն)*
ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ	_____	_____
	(անուն, ազգանուն)	*(անուն, ազգանուն)*

Հավելված 2
2021 թ. հոկտեմբերի ...-ի
N ..... պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

_____ **«**_____**»** թեմայի

(ծածկագիր) *(վերնագիր)*

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի N 1963-Ա/2 հրաման:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):
3. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Կոմիտե	**Թեմայի ղեկավար**
Գլխավոր քարտուղար՝	Թեմայի ղեկավար՝
_____	_____
(ստորագրություն)	*(ստորագրություն)*
ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ	_____
	(անուն, ազգանուն)

Հավելված 3
2021 թ. հոկտեմբերի ...-ի
N ..... պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ [1]

_____ «_____» թեմայի

(ծածկագիր) *(վերնագիր)*

Հ/h	Իրականացվելիք Հետազոտության			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները	կատարման ժամկետները
1				
2				

Կոմիտե

Գլխավոր քարտուղար՝

_____

(ստորագրություն)

ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ

Թեմայի ղեկավար

Թեմայի ղեկավար՝

_____

(ստորագրություն)

_____

(անուն, ազգանուն)

[1] *Իրականացվելիք Հետազոտությունները ներկայացնել 3-ամսյա փուլերով կամ Գանտի աղյուսակի տեսքով:*

Հավելված 4
2021 թ. հոկտեմբերի ...-ի
N ..... պայմանագրի

Համաձայն եմ՝

Կոմիտեի գլխավոր քարտուղար՝

_____ **ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ**

(ստորագրություն)

Կ. Տ.

Նախահաշիվ

_____ **«**_____**»** թեմայի

(ծածկագիր) *(վերնագիր)*

(հազար դրամ)

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	**այդ թվում (ըստ տարիների)՝**			
			2021 թ.	**2022 թ.**	**2023 թ.**	**2024 թ.**
1.	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները					
2.	Այլ ծախսեր, այդ թվում՝					
2.1	*սարքեր, նյութեր և ծառայություններ*					
2.2	*գործուղումներ*					
2.3	*վերադիր ծախսեր*					
Ընդամենը						

Թեմայի ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված N 2
ԳԿ նախագահի
2021 թ. հոկտեմբերի **14**-ի
N 25-Ա/Ք հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «____» հոկտեմբեր, 2021 թ.

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, _____ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս

(կազմակերպության անվանում)

_____ի և _____ը (այսուհետ՝

(տնօրենի/ռեկտորի անուն, ազգանուն) *(թեմայի ղեկավարի անուն ազգանուն)*

Թեմայի ղեկավար), (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի N 1690-Ա/2 հրամանը, _____«_____» գիտական թեմայի

(ծածկագիր) *(վերնագիր)*

(այսուհետ՝ Թեմա) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

11. Պայմանագրի առարկան

11.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Թեմայի իրականացման նպատակով հատկացնել _____ ՀՀ դրամ գումար, իսկ Թեմայի ղեկավարը պարտավորվում է Թեման

(թվերով և բառերով)

իրականացնել Պայմանագրով սահմանված կարգով:

11.2 Հատկացվելիք գումարի չափը հաստատվում է Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությամբ (Հավելված 1), նախատեսված՝ Թեմայի ղեկավարի կողմից իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Հետազոտություն) կատարման փուլերի ժամկետները և ֆինանսավորման ծավալները որոշվում են առաջադրանքով, օրացուցային պլանով և նախահաշվով (Հավելվածներ 2, 3 և 4):

12. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

12.1 Կոմիտեն իրավունք ունի՝

12.1.1 Կազմակերպությունից և Թեմայի ղեկավարից պահանջել կատարելու Պայմանագրի **2.5** և **2.6** կետերով նախատեսված պարտավորությունները,

12.1.2 Թեմայի ղեկավարից պահանջել աշխատանքը կատարել Պայմանագրի **7**-րդ կետում նշված ժամկետում,

12.1.3 չընդունել իրականացված Հետազոտությունները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

12.1.4 կատարել Թեմայի ղեկավարի փոփոխություն՝ վերջինիս կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ Կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի և Թեմայի կատարողների համաձայնությամբ, Կազմակերպության ղեկավարի միջնորդությամբ,

12.1.5 համաձայնել Թեմայի կատարողների կազմում կատարել ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի և տարիքային խմբի համարժեք փոփոխություն՝ Թեմայի ղեկավարի միջնորդությամբ,

12.1.6 համաձայնել կատարել Թեմայի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարի վերաբաշխում՝ Թեմայի իրականացման 12-ամսյա ժամանակահատվածում մեկ անգամ՝ Թեմայի ղեկավարի առաջարկությամբ,

12.1.7 դադարեցնել Թեմայի ֆինանսավորումը՝

12.1.7.1 Հայաստանի Հանրապետությունից Թեմայի ղեկավարի երկու ամսից ավելի անընդհատ բացակայության դեպքում,

12.1.7.2 առանց Կոմիտեի համաձայնության Թեմայի կատարողների կազմում փոփոխություն կատարելու դեպքում,

12.1.7.3 առանց Կոմիտեի համաձայնության Թեմայի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում վերաբաշխում կատարելու դեպքում,

12.1.7.4 ընթացիկ հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում,

12.1.7.5 մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից ընթացիկ հաշվետվությանը տրված բացասական եզրակացության դեպքում,

12.1.7.6 **Հայաստանի Հանրապետության** կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի ապրիլի 27-ի N 619-Ա/2 հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված Հավելված N 2-ի 1.7 կետով սահմանված պահանջներին համապատասխան եռամյա հաշվետվությունը չներկայացնելու կամ Խորհրդի կողմից եռամյան հաշվետվությանը տրված բացասական եզրակացության դեպքում:

12.1.7.7 Թեմայի ղեկավարի կողմից յուրաքանչյուր հաջորդ փուլի շեմային պայմաններին չբավարարելու դեպքում:

12.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

12.2.1 Պայմանագրի Հավելված 4-ով նախատեսված «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսված միջոցները տնօրինել Թեմայի կատարման ընթացքում Կազմակերպության կողմից մատուցած ծառայությունների ծախսերը հոգալու նպատակով,

12.2.2 Կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի և Թեմայի կատարողների համաձայնությամբ Կոմիտե ներկայացնել միջնորդություն՝ Թեմայի ղեկավարի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում փոփոխություն կատարելու մասին:

12.3 Թեմայի ղեկավարն իրավունք ունի՝

12.3.1 իրականացված Հետազոտության արդյունքը Կոմիտեի կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելիք գումարը,

12.3.2 Կոմիտեի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները,

12.3.3 Թեմայի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

12.3.4 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպությունների հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

12.4 Կոմիտեն պարտավոր է՝

12.4.1 ընդունել կատարված աշխատանքի արդյունքը համաձայն Պայմանագրի Հավելված 3-ի և վճարել դրա համար,

12.4.2 Թեմայի իրականացման մասին ներկայացված ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների վերաբերյալ ընդունել համապատասխան որոշում:

12.5 Կազմակերպությունը պարտավոր է՝

12.5.1 ապահովել Թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ,

12.5.2 Թեմայի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

12.5.3 Կոմիտեին տեղեկացնել առանց նախազգուշացնելու Հայաստանի Հանրապետությունից երկու ամսից ավելի ժամկետով Թեմայի ղեկավարի անընդհատ բացակայության, պարտականությունների կատարման անհնարինության հետ կապված այլ հանգամանքների մասին,

12.5.4 Կոմիտե ներկայացնել Թեմայի ղեկավարի և Կազմակերպության միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենը:

12.6 Թեմայի ղեկավարը պարտավոր է՝

12.6.1 Թեման կատարել անձամբ՝ կատարողների ընդգրկմամբ,

12.6.2 Թեման կատարել Պայմանագրի Հավելված 2-ին համապատասխան,

12.6.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով,

12.6.4 Թեմայի իրականացման աշխատանքների ավարտման օրվա դրությամբ չօգտագործված ֆինանսական միջոցները մեկշաբաթյա ժամկետում վերադարձնել Կոմիտեի համապատասխան հաշվին՝ կցելով ֆինանսական միջոցների չօգտագործման վերաբերյալ բացատրագիր,

12.6.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

12.6.6 Կոմիտեին տեղեկացնել երկու ամսից ավելի բացակայելու մասին՝ բացակայելուց առնվազն մեկ շաբաթ առաջ,

12.6.7 աշխատանքի սպասվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել Կոմիտե,

12.6.8 ապահովել Հրաման հաստատված Հավելված N 2-ի 4.1, 4.2 և 4.4 կետով նախատեսված պահանջները,

12.6.9 Կոմիտե ներկայացնել Թեմայի իրականացման յուրաքանչյուր 12-ամսյա փուլի մասին ընթացիկ հաշվետվություն, իսկ Թեմայի ավարտից հետո՝ ամփոփիչ հաշվետվություն: Ընթացիկ հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր փուլի իրականացման ժամկետի սկզբից հաշված 12-րդ ամսվան հաջորդող ամսվա առաջին 10-օրյակում, իսկ ամփոփիչ հաշվետվությունը՝ Թեմայի իրականացման ավարտից հետո 20 օրվա ընթացքում,

12.6.10 Թեմայի կատարողի փոփոխության անհրաժեշտություն առաջանալու դեպքում մեկշաբաթյա ժամկետում, համապատասխան հիմնավորմամբ դիմել Կոմիտե՝ ըստ գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի և տարիքային խմբի համարժեք փոփոխություն կատարելու կամ կատարողների կազմը մեկով կրճատելու (եթե մինչև 35 տարեկան կատարողը չէ) միջնորդությամբ: Թեմայի կատարողների կազմը կրճատելու, ինչպես նաև Հրամանով հաստատված Հավելված N 2-ի 5.7 կետով նախատեսված մինչև երկու կատարողով ավելացնելու դեպքում Կոմիտեի հետ կնքվում է Պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր,

12.6.11 Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքներին վերաբերող գիտական հրապարակման մեջ՝ ներառյալ զեկույցների թեզիսները, հիշատակել Կոմիտեի կողմից

ստացած աջակցության մասին՝ Հրամանով հաստատված Հավելված N 2-ի 1.5 կետով նախատեսված պահանջներին համապատասխան:

13. Թեմայի ֆինանսավորման չափը

Թեմայի ֆինանսավորման չափը կազմում է _____ ՀՀ դրամ:

(թվերով և բառերով)

14. Մշտադիտարկում

Կոմիտեն կարող է Թեմայի **շրջանակներում իրականացնել մշտադիտարկում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 20-ի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման» կարգի:**

15. Վճարման կարգը և ժամկետները

15.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

15.2 Հաշվի առնելով աշխատանքների առանձնահատկությունները և ելնելով Կոմիտեի ֆինանսավորման հնարավորություններից՝ կարող է սահմանվել Պայմանագրի **5.1** ենթակետում նշված գրաֆիկից տարբերվող այլ տոկոսային բաշխում:

16. Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Թեմայով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Թեմայի ղեկավարը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Հետազոտության չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Հետազոտության համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Թեմայի ղեկավարին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Թեմայի ղեկավարին վճարվելիք գումարներից:

17. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է **մինչև 60** ամիս ժամկետով:

18. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված

պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմերին:

19. Եզրափակիչ դրույթներ

19.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

19.2 Պայմանագիրը կնքվում է երեք օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Կողմերին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

19.2.1 Թեմայի ղեկավարի կողմից Կոմիտե ներկայացված Թեմայի հայտը,

19.2.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (Հավելված 1),

19.2.3 Առաջադրանքը (Հավելված 2),

19.2.4 Օրացուցային պլանը (Հավելված 3),

19.2.5 Նախահաշիվը (Հավելված 4):

19.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

20. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե	**Կազմակերպություն**	**Թեմայի ղեկավար**
ՀՀ գիտության կոմիտե	_____	
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22	*(կազմակերպության անվանումը)*	
Հ/h 900011033066	_____	
ՀՎՀՀ 02704199	*(կազմակերպության հասցեն)*	
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	_____ *(կազմակերպության բանկային վավերապայմանները)*	
Գլխավոր քարտուղար `	Կազմակերպության ղեկավար՝	Թեմայի ղեկավար՝
_____	_____	_____
(ստորագրություն)	*(ստորագրություն)*	*(ստորագրություն)*
	_____	_____
ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ	*(անուն, ազգանուն)*	*(անուն, ազգանուն)*
Կ. Տ.	**Կ. Տ.**	

Հավելված 1
2021 թ. հոկտեմբերի ...- ի
N ..... պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնության

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանը, Կազմակերպության ղեկավար _____ը և _____ **«_____»**

(անուն, ազգանուն) *(ծածկագիր)* *(վերնագիր)*

Թեմայի ղեկավար _____ը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք

(անուն, ազգանուն)

բերել **2021 թվականի հոկտեմբերի «_____» N _____ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ _____ ՀՀ դրամ գումարի չափով:**

(թվերով և բառերով)

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե	**Կազմակերպություն**	**Թեմայի ղեկավար**
Գլխավոր քարտուղար՝	Կազմակերպության ղեկավար՝	Թեմայի ղեկավար՝
_____	_____	_____
(ստորագրություն)	*(ստորագրություն)*	*(ստորագրություն)*
ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ	_____	_____
	(անուն, ազգանուն)	*(անուն, ազգանուն)*

Հավելված 2
2021 թ. հոկտեմբերի ...- ի
N ..... պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

_____ **«**_____**»** թեմայի

(ծածկագիր) *(վերնագիր)*

4. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի N 1690-Ա/2 հրաման:

5. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

6. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Կոմիտե	**Թեմայի ղեկավար**
Գլխավոր քարտուղար՝	Թեմայի ղեկավար՝
_____	_____
(ստորագրություն)	*(ստորագրություն)*
ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ	_____
	(անուն, ազգանուն)

Հավելված 3
2021 թ. հոկտեմբերի ...- ի
N ..... պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ [2]

_____ «_____» թեմայի

(ծածկագիր) *(վերնագիր)*

Հ/h	Իրականացվելիք Հետազոտության			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները	կատարման ժամկետները
1				
2				

Կոմիտե

Գլխավոր քարտուղար՝

_____

(ստորագրություն)

ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ

Թեմայի ղեկավար

Թեմայի ղեկավար՝

_____

(ստորագրություն)

_____

(անուն, ազգանուն)

[2] *Իրականացվելիք Հետազոտությունները ներկայացնել 6-ամսյա փուլերով կամ Գանտի աղյուսակի տեսքով:*

Հավելված 4
2021 թ. հոկտեմբերի ...- ի
N ..... պայմանագրի

Համաձայն եմ՝

Կոմիտեի գլխավոր քարտուղար՝

_____ **ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ**

(ստորագրություն)

Կ. Տ.

Նախահաշիվ

_____ **«**_____**»** թեմայի

(ծածկագիր) *(վերնագիր)*

(հազար դրամ)

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	**այդ թվում (ըստ տարիների)՝**					
			2021 թ.	**2022 թ.**	**2023 թ.**	**2024 թ.**	**2025 թ.**	**2026 թ.**
1.	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները							
2.	Այլ ծախսեր, այդ թվում՝							
2.1	*սարքեր, նյութեր և ծառայություններ*							
2.2	*գործուղումներ*							
2.3	*վերադիր ծախսեր*							
2.4	*խմբի կամ լաբորատորիայի ամրապնդում*							
Ընդամենը								

Թեմայի ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված N 3
ԳԿ նախագահի
2021 թ. հոկտեմբերի 14-ի
N 25-Ա/Ք հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան «____» _____ 20.. թ.

_____ ծածկագրով «_____» գիտական թեմայի

(թեմայի վերնագիրը)

(այսուհետ՝ Թեմա) ղեկավարը (այսուհետ՝ Թեմայի ղեկավար), ի դեմս _____ -ի, մի կողմից, և

(անուն, ազգանուն)

_____-ի (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս _____
(կազմակերպության անվանումը) *(տնօրեն/ռեկտոր անուն, ազգանուն)*

(այսուհետ՝ միասին՝ Կողմեր), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կազմակերպությունը պարտավորվում է մատուցել Պայմանագրի **1.2.** կետում նշված ծառայությունները, իսկ Թեմայի ղեկավար պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կազմակերպությունը պարտավորվում է գիտական կազմակերպության (բուհի) տնօրինության տակ թողնված գումարների և գիտական կազմակերպությունում առկա նյութատեխնիկական միջոցների հաշվին ապահովել անհրաժեշտ պայմաններ. տարածք, էլեկտրականություն, ջրամատակարարում, ջեռուցում, կոմունալ սպասարկում, կապ, նյութատեխնիկական արժեքների պահպանում և այլն:

1.3. Աշխատանքների կատարման ժամկետն է «___»_____ 20.. թ. մինչև «___»_____ 20..թ.:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.1.1. ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ամբողջ ծավալով, Պայմանագրի **1.3.** կետում նշված ժամկետում,

2.1.2. Թեմայի ղեկավարի պահանջով ___ օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.1.3. Թեմային հատկացված «Այլ ծախսեր» բաղկացուցիչի միջոցների սահմաններում և Թեմայի ղեկավարի գրավոր պահանջագրերի հիման վրա կատարել ֆինանսական գործարքներ Թեմայի իրականացման նպատակով,

2.1.4. գրավոր հիմնավորել պահանջագրերի չիրականացման կամ մերժման պատճառները,

2.1.5. Թեմայի ղեկավարին ժամանակին տեղյակ պահել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի կողմից ստացված ֆինանսական, կազմակերպչական և Պայմանագրի հետ առնչվող այլ հարցերով ընդունված որոշումների, հրամանների, հրահանգների մասին:

2.2. Թեմայի ղեկավարը պարտավոր է՝

2.2.1. ծառայությունների մատուցման համար վճարել Պայմանագրի **3**-րդ հոդվածում նշված գնին համապատասխան,

2.2.2. Թեմայի կատարողների հետ կնքել պայմանագրեր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

2.3. Թեմայի ղեկավարը իրավունք ունի՝

2.3.1. ստուգել 2.1.Կազմակերպության ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը,

2.3.2. ցանկացած ժամանակ հրաժարվել Պայմանագիրը կատարելուց՝ Կազմակերպությանը վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է արդեն մատուցված ծառայությունների չափին:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Պայմանագրի գինը կազմում է _____ ՀՀ դրամ, որը Թեմայի
(թվերով և բառերով)
«Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարի ____ տոկոսն է, և թողնվում է գիտական կազմակերպության տնօրենի (ռեկտորի) իրավասությանը՝ Թեմայի կատարումն ապահովելու համար:

3.2. Թեմայի ղեկավարի կողմից Կազմակերպությանը պայմանագրային գինը վճարվում է Պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրի 1.3. կետում նշված ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու համար Կազմակերպությունը Թեմայի ղեկավարին վճարում է տուգանք Պայմանագրի արժեքի ____ տոկոսի չափով և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար ____տոկոսի չափով:

4.2. Տույժի վճարումը Կազմակերպությունը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտա-րարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի կողմից:

7.2. Պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Կողմերին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Թեմայի ղեկավարի	Կազմակերպություն
_____	_____
(անուն, ազգանուն)	(կազմակերպության անվանումը)
_____	_____
(հասցեն, հեռախոս)	(հասցեն)
_____	_____
(բանկային վավերապայմաններ)	(բանկային վավերապայմանները)
_____	_____
(ստորագրություն)	(պաշտոն, անուն, ազգանուն)
	_____
	(ստորագրություն)
	Կ. Տ.